

ճակին: Սուրբերու անուններով բաժնուած է զանազան շրջաններու կամ թաղերու, որոնց մէջ ամէն ընտանիք ընտրած է իրեն սեպհական Գամբարանը: Գերեզմանատունին ճիշդ կենդրոնը որոշուած է եկեղեցիի, զոր Ազգը պիտի կառուցանէ ապագային: Այս տեղին շատ մօտն է եկեղեցականներու յատկացուած վայրը, ուր առաջին թաղուած եպիսկոպոսն եղաւ Խորէն Արքեպիսկոպոս Նար-պէյ մեծ բանաստեղծը եւ երկրորդը՝ Գարեգին եպիսկոպոս Սրուանձտեանցը, անմահ գրագէտը, Խրիմեան Հայրիկի ձեռնասունը եւ սիրելին: Այս երկու եպիսկոպոսները միեւնոյն ամսի մէջ վախճանած են 1892ին, եւ թաղուած են իրարու քով: Աւելին իրենց փառաւոր շիրիմները,

Առաջինին վրայ կը կարգանք՝

Աստ Հանգչին ոսկերք
Արքազան Տեառն
Խորենայ
Արքեպիսկոպոսի
Գալֆայեան Նար պէյ,
Արդինաւոր Թարգմանչի
Քերթողի եւ Հոնտորի

Ծնաւ
ի Կոստանդնուպօլիս
Յամին 1832 Հոկտ. 1
Հանգեալ ի Տէր
Յամի 1892 Նոյմ. 4

Ժողովուրդ թաղին Պէշիքթաշի
Կանգնեաց զայս Ծիրիմ՝
Տրովք իւրովք եւ այլոց բարեսիրաց
Յանմոռաց յիշատակ
Բազմամեայ քարոզչին իւրոյ
յամի 1898 ՌՅՄԵ:

Իսկ երկրորդին վրայ՝

Սրուանձտեանց
Տ. Գարեգին եպիսկոպոս
Ծնեալ ի Վան յամի 1840 Նոյեմբեր 17
եւ վախճանեալ ի Կ. Պոլիս 1892 Նոյեմբեր 17
Նդեալ ճշմարիտ պաշտօնեայ
Հայաստանեայց սուրբ եկեղեցոյ
Արդինաւոր մշակ այգոյն Բրիտոսի
եւ
Հեղինակ

Ընթերցարան մանկանց

Գրոց քրոց Բրիտոսնէական
Հնոց նորոց Թորոս աղբար
շուշանիկ Համով հոտով
մանանայ եւ այլ երկոց

Հայ եկեղեցականութեան երկու կարեւոր դէմքերն էին ասոնք. առաջինը մեծ անուն թողած է ազգային Մատենագրութեան մէջ, իսկ երկրորդը՝ Վանի զաւակ՝ մեղածորան գրչի տէր, բացի կարեւոր գործերու հեղինակ ըլլալէ, յատուկ կտակագրով ալ Ազգին թողած է կարեւոր գումար մը, որպէս զի ատով իւր ծննդավայրին մէջ աղքատ Հիւանդներու համար Հիւանդանոց մը շինուի:

Կտակուած գումարը (1000 օսմ. ոսկի) դրուած է ի պահ եւ ի շահ Պերաի կալուածոց Հոգաբարձութեան քով եւ բերած տոկոսներով բազմապատկուած է կ'ըսուի այսօր:

Սրուանձտեանց՝ 1889 յունուար 12ին շարադրած է իր կտակագիրը, զոր վերջացուցած է հետեւեալ սողերով՝

« Իբրեւ մահկանացու միշտ պատրաստ լինելով մտնելու, իբրեւ Բրիտոսի պաշտօնեայ արթուն գտնուելու համար եւ իբրեւ նպաստ մը Ազգիս ընծայելու սոյն կտակագիրս գրեցի ի քաջառողջ վիճակի, յաւուր՝ քարոզչութեան Ս. Երրորդութեան եկեղեցոյ Բերայի¹ »:

Գժբախտաբար Սրբազանին փառաբան Հիւանդանոցը կարելի չէ եղած բացուիլ վաղքի մէջ. բայց կտակուած գումարին արտադրած հասոյթովը ժամանակէ մը ի վեր Սրուանձտեանցի անունով հիւանդներ կը դարմանուին հիւանդանոցներու մէջ:

* * *

Սոյն եպիսկոպոսներուն առընթերթաղուած են հետզհետէ Խորէն պատրիարք Աջըբեան, Գրիգորիս եպ. Յովհաննէսեան, Գեորգ եպ. Երէցեան (Կիլիկիոյ կաթողիկոս ընտրուած ու հրաժարած), Բարթոլոմէոս եպ. Չամչեան (Տեղապահ եղած), Արիստակէս եպ. Վանքեան, Հմայեակ եպ. Գիմարսեան (Տեղապահ), Վահրամ եպ. Մանկունի (Տեղապահ), Գաբրիէլ եպ. Ճէվահիճեան (պատրիարքական փոխանորդ եւ

¹ Արեւել. ժ. տարի, Թի. 2836, 17 յունիս 1893՝

Տեղապահ) Յովհաննէս Ա. եպ. Արշարունի (նախկին պատրիարք), նաեւ քահանաներ եւ վարդապետներ. ասոնց կարգին յիշատակելի է Զէյթունցի Գրիգոր վարդապետ Աբարթեան, որ 1862ի Զէյթունի ապստամբութեան տարին պատգամաւորութեան մը գլուխը անցած, ուղեւորած է Պարիզ եւ հոն գտնուող Շահնազարեան կարապետ վարդապետին առաջնորդութեամբը ներկայացած է Նապոլէոն Գ. կայսեր, Ռէլիոյ հայերուն համար պաշտպանութիւն խնդրելու:

Ասոնցմէ քիչ հետո, իր ընտանեկան մասնաւոր Գամբարանին մէջ կը հանգչի Օրմանեան Մաղաքիա պատրիարք որ Գերեզմանատան բարեղարուցութեանը ու կարգաւորութեանը մեծ ազդակ եղած է ժամանակին, եւ կը քահայր անոր բաժանումներու անուանակոչութեան:

Այս հանգուցեալ եկեղեցականներուն մեծագոյն մասը, ունին իրենց շիրիմները, որոնց մէջէն երկու պատրիարքներունը միայն կարեւոր կը համարիմ՝ զեռեղել հոս:

Մահարձան

Տ. Տ. Խորէն Արքեպիսկոպոս Աջըբեանի Անձնագոհ պատրիարքին Հայոց Թորքիոյ ի Կ. Պոլիս

Սերովբէ որդեգիր Չարխափան Ս. Աստուածածնին Արմաշու

Ուշիմ՝ ուսանող, լուրջ կրօնաւոր, ուսուցիչ անձանձիր

Յուսաշող հրապարակագիր, մատենագիր անկաշառ

Վարդապետ ուղղափառ, եպիսկոպոս անաշառ

Բարեկարգ վանահայր, հովիւ բարեւ պատկառելի

Պատրիարք հաւատարիմ Ազգին եւ պետութեան

Դպրէվանուց հիմնադիր

Արժանի խորին երախտագիտութեան եւ անմոռաց յիշատակութեան

Չոր կանմահացնեն այս մահարձանով Չինքն խորէն ճանչցողներ 1907

Ծն.: Ի Քէրէմէթ գիւղ Նիկոմիդիոյ 1842 Նոյեմ. 4.

Վաճն.: Ի Մաքրի գիւղ Կ. Պոլիս 1899 Հոկտ. 26:

Տէր Մաղարիա Արքեպիսկոպոս Օրմանեան Մեծանուն պատրիարք Հայոց Թորքիոյ եւ

Քաջարթուն Առաջնորդ Հայոց վիճակին Կարնոյ

Տաղանդաւոր Ուսուցիչ Իմաստասիրութեան եւ

Աստուածաբանութեան ի հոգեւոր ճեմարանին

Մայր Աթոռոյ Սուրբ Էջմիածնի Բազմարդին Վանահայր Դպրէվանուց Արմաշու

Հովիւ քաջաբարոյ քանին կենացու Հոնտոր հոգեւունչ

Պանծալի Հեղինակ եկեղեցական-Ազգային պատմութեանց

եւ այլ բանասիրական գործոց

Ծնեալ ի Կ. Պոլիս ի 11 փետրվարի 1841 ամի

Չեռնադրեալ եպիսկոպոս յ 8 յունիսի 1886 ամի

Ընտրեալ ի պատրիարքութեան ի 6 Նոյեմբերի 1896 ամի

եւ զոր վարեաց յ 10 Յուլիսի 1908 ամի

վախճանեալ ի 20 Նոյեմբերի 1918 ամի

Ինչպէս յիշած եմ արդէն աշխատութեան Ա. Հատորին մէջ (էջ 269), այս երկու պատրիարքներուն վրայ Մայր եկեղեցիին մէջ կատարուած է մահափորձ: Խորէն պատրիարք այդ օրուան կրած երկիւղէն սաստիկ ազդուած, հիւսած է տակաւ եւ ստամոքսի կեղ ունենալով վերջացած է: Օրմանեան ուսէն վերադարձելով հանդերձ, ամենամեծ քաջութեամբ տարած է վտանգը ու դիմագրելով կրցած է հինգ տարի եւս անվեհեր շարունակել իր պատրիարքական պաշտօնը մինչեւ 1908 յուլիս, Օսմ. Մահմապաշածը մինչեւ 1908 յուլիս, որ ատեն քանի նաղրութեան հռչակուած օրերը, որ ատեն քանի մը անպաշտօն անձեր, ամէնքն ալ անձնական ատելութեամբ մղելալներ, Ղալաթիոյ եկեղեցին խուժեցին՝ Ազգ. վարչութեան ժողով գումարած միջոցին, ու բողոքի մեծ ժխոր ու աղմուկ հանելով յայտնեցան պատրիարքը հրաժարեցունել տալ, այն պատճառաբանութեամբ, թէ Օրմանեան անտարբեր եղած էր Օսմ. Մահմապաշտութեան հռչակումին եւ չէր փութացած հանդէսներ տարբել այդ առթիւ:

Անոր դէմ եղած ամբաստանութիւնները (լաւ եւս է բոլր զբաղարտութիւնները) բոլորն ալ յետոյ ջրեցան, Ազգը ցաւ յայտնեց, մինչեւ անգամ փնտռեց զինքը, ու նորէն պատրիարք

Կեանք էր այն յոր դու մեռար ամեն օր
 Յաւով սրբացած մահուան մշտախորհ
 Զղջալ, ամենուն ներել էր քու հոգ
 Բու ոյր բարբը խիստ, սիրտն էր դիրողոք,
 Բեզ ներող նոյնպէս վերն՝ Հայր դուն ես դուն
 Որ բեզ քաղցրութեամբ ձայնէ Յարութիւն:

Այս տապանագիրը յօրինած ու փորագրել
 տուած է իւր որդին՝ գրական ու բանասիրական
 աշխատութիւններովը ծանօթ՝ Վանչէսթրաքնակ
 Տեար Գառնիկ Ֆրնտըքլեան, ինչպէս կը յայտնէր
 զայս իւր ինձ ուղղած 1928 փետրուար 23
 թուակիր նամակովը:

Ս. Վարդանանց եկեղեցիին մօտն է՝ թա-
 դին Ազգ. երկսեռ վարժարանը Ս. Մեսրոպեան,
 զոր բոլորովն նոր վերաշինեց ջենոր պէյ Մէր-
 Տամէթճեան եւ այդ առթիւ վարժարանը կը կրէ
 այսօր այդ բարերարին անունը:

Ֆերի գիւղի մէջ էր որ համերոպական
 պատերազմի զինագործէն յետոյ, Բէնէտիկոտո
 Ժե՛ր՝ Սրբազան Քահանայապետը իր նուիրա-
 տութեամբը հաստատեց Հայ Որբերու համար
 վարժարան մը եւ զայն ենթարկեց Վենետիկի
 Միթիթարեան Հայրերու խնամարկութեան:

Հոն կը դաստիարակուէին հարիւրաւոր
 որբեր, որոնք 1922ին փոխադրուեցան Ֆիէսօ՝
 Վենետիկէն մէկ ժամ հեռու, Միթիթարեանց
 Միարանութեան սեպհական շէնքին մէջ եւ
 ապա Միլանօ, ուր կանգուն է այժմ:

Ֆերի գիւղէն դէպի հարաւ Տոլլապ-Տերէ
 ըստած ձորին մէջ ալ ցիրուցան կը բնակին
 բաւական թուով Հայեր, որոնք երբեմն ունէին՝
 Արշակունեան անունով երկսեռ նախակրթա-
 րան մը, համանուն ընկերութեան մը նախա-
 ձեռնութեամբը հաստատուած, որ ապա յանձ-
 նուեցաւ Պերաի եւ Բանկալթիի Ազգ. վարժա-
 րաններուն Տնօրէնութեան եւ Պերաի թաղական
 խորհուրդը կը հոգարանործաւքերը: Այս նախա-
 կրթարանը փայտաշէն, թէեւ քանիցս ուղղուեցաւ
 վերաշինել բայց չյաջողեցաւ: Վերջերս շատ
 խարխլած ըլլալուն թաղ. խորհուրդը զայն

բոլորովն վար առնել տուաւ եւ աշակերտ ու
 աշակերտուհիները բաժնուեցան Բանկալթիի,
 նաեւ Պերաի դպրոցները:

Աւելորդ չըլլայ թերեւս ըսել, թէ Շիշլիի
 Ազգ. Գերեզմանատունէն դէպի Հապէտոյ տանող
 լեռնային ճամբուն մէջտեղերը կառուցուած է
 թուրք Համազգային Անկելանոցը, որուն
 պարտէզը՝ ի շարս ուրիշ Քրիստոնեայ Ազգերու,
 ունի Հայերու համար ալ յատուկ մատուց մը
 Մայր Ս. Աստուածամանի նուիրուած, ուր կը
 սպասուորէ միշտ հայ Քահանայ մը, որովհետեւ
 Անկելանոցը կը պատասխարէ նաեւ բաւական
 թուով անկար Հայեր:

Եւ ասոնք են ահա Բանկալթի-Շիշլի-Ֆերի-
 քէոյ թաղերուն մէջ այժմ գտնուած Ազգային
 Հաստատութիւնները, որոնց ցանկը կցելով
 Պերաի մէջ եղածներուն, կը տեսնենք թէ հայ-
 կական հոգեւոր եւ մտաւոր գործունէութեան
 ինչ հիանալի համայնապատկեր մը կը յօրինեն
 ասոնք. պատկեր մեծապէս լուսաւոր, որուն
 շողերը կը տարածուէին շատ հեռուները:

Բայց թողունք այս բոլորը եւ դառնանք
 ընկերանալ դարձեալ Երեմիա Չէլչպիի, որ իւր
 հիւր վարդապետը Բանկալթիի հին Գերեզմա-
 նատունին այցելութեան բերելէ յետոյ, կը
 տանի կ'իջեցունէ Թօփիանէ (Թնդանօթարան)
 կոչուած տեղը:

(Շարտեանայնոյն.) ԴՅՏ. ՎԱՆՐԱՄ Յ. ԹՈՐԳՈՄԵԱՆ

ՄԻ Է՞՞ ՄԻԹԱՐԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵՆԷՆ

«Բազմավէպ»ի 1924—1928 տարիներու
 մէջ հրատարակած է Մեծ. Հ. Ղևոնդ
 Տայեան շահեկան քաղուածներ Միթիթա-
 րեան Դիւանէն:

Այդ առթիւ Մեծ. Հայրը հաղորդած է
 նաեւ հետաքրքրական դիտողութիւններ ի
 նպատակ Միթիթարեան Միարանութեան պատ-
 մութեան: Դիտողութիւններէն ոմանք կը
 շօշափեն նաեւ իմ «Ա. կ. ն. ար. կ. մը Վիեն-
 նայի Միթիթարեան Միարանութեան գրական
 գործունէութեան վրայ» երկասիրութիւնս

(Յ ու շ ա ր ձ ա ն, էջ 1—56, նաեւ առան-
 ձին հրատարակութեամբ): Եւ կ'առաջար-
 կուին ինչ ինչ սրբագրութիւններ յիշեալ աշ-
 խատութեանս մէջ:

Ամէն մի դիտողութիւն, որ Միթիթա-
 րեան Միարանութեան Պատմութեան կը
 հայի, հաճելի է ինձ. եւ երախտապարտ
 զգածուններով պիտի ընդունիմ եթէ անոնք
 ուղղեն եւ լուսարանեն Ա. կ. ն. ար. կ. ու
 եւ իցէ մի կէտը: Ես գրած եմ Ա. կ. ն. ար. կ. ու
 յեցած Միարանութեանս հին աւանդութիւն-
 ներու եւ ինձ մատչելի դիւանական թղթե-
 րու վրայ: Անտարակոյս 1701—1773 շրջանի
 պատմութեան համար շատ նիւթեր կան
 Ս. Ղազարու Դիւանին մէջ, որոնք անմատ-
 չելի են մեզի: Այս պատճառաւ ալ կարող
 են Ա. կ. ն. ար. կ. ու մէջ պատահել զէպքեր,
 են որոնք պէտք ունենան ճշդութիւն: Եւ ո՞ր
 պատմական աշխատութիւնն է այն, հեռա-
 ւոր եւ մերձաւոր շրջանէն, որ չկարօտի
 ուղղումներու, նոր վաւերագիրներու յայտ-
 նութեամբ: Ես չեմ ունեցած ընդունայն
 յաւակնութիւնը ամենայն ինչ դիտնալու.
 հետեւաբար սիրով պիտի ընդունիմ ուղ-
 դումները սխալներու, լուսարանութիւն-
 ները մութ տողերու:

Սօսքը անցեալ ժամանակներու մասին
 է, որ արդէն պատմութեան կը վերաբե-
 լին: Այդ շրջանի մեր երանաշնորհ նախ-
 նեաց գործունէութիւնը կարող էր ունենալ
 իւր մէջ կէտեր, գործնք պատմութիւնը հե-
 տազային թերեւս արդարացիէր, այսպէս
 ժամանակը կը դատասպարտէր, այսպէս
 նաեւ ընդհակառակը: Ոչ մի պատահար ա-
 ղանց պատճառի: Եթէ Միարանութեան մէջ
 տեղի ունեցաւ (1773) թիւրիմացութիւն մը
 եւ ասոր հետեւութեամբ բաժանում, այն
 ունենալու էր իւր իրաւական եւ անտեսա-
 կան պատճառները. թէ ո՞րքան արդար-
 կամ անարդար, պատմագէտի արդարա-
 կրով դատողութիւնը միայն կրնայ կշռել,
 յեցած վաւերական տուեալներու վրայ: Իր
 ղատաստանը ահաբեկելու չէ ներկայ սե-
 րունդը, որուն այժմ պարտք կը մնայ բա-
 րին օրինակ առնուլ եւ խոյս տալ չարէն:

Երբ ես կը գրէի առաջին անգամ Վիեն-
 նայի (= Տրիեստի) Միթիթարեանց ծագման
 պատմութիւնը, պատմական անցեալէն դէպք
 մը միայն գրի կ'առնէի հիմնուած մեր նախ-
 նեաց աւանդութեանց վրայ. առանց ատով
 վերաւորել ուղեւոր զգայուն սրտեր: Կարող
 է աղբիւրս անձիշդ լինել. բայց ինչո՞ւ

կասկածիլ անկեղծ ճշմարտախնդրութեանս
 վրայ:

Այսպէս Մեծ. Հ. Տայեան (ԲԶՄ. 1926,
 էջ 190—192) «անհիմն» կը գտնէ գրու-
 թիւնս, «որ կը մաքառի յայտնի ճշմարտու-
 թեան դէմ» եւ կը տեսնէ «մասնաւոր թա-
 տողիս մէջ: Կը խոստովանիմ թէ «անհիմն
 ներկայացուած է գրութիւնս, այսինքն տեղը
 չէր ներքէ հիմունքներս մատնացոյց ընել
 ընթերցողներուն, աղբիւրները մասնական
 աշխատութեան մը մէջ մտադրուած էր տալ
 († Հ. Գ. Գալմաքարեանէ): Բայց չեմ
 կարծեր թէ մաքառած լինիմ «յայտնի
 ճշմարտութեան դէմ», որովհետեւ դիտնա-
 լովս պատմութեան վերաբերող այն ճշմար-
 ւոր պատմութեան առաջին անգամ Ա. կ-
 տութիւնը հայերէն առաջին անգամ Ա. կ-
 նար կիւ մէջ կը յայտնաբերուէր, առանց
 նար կիւ մէջ կը յայտնաբերուէր» որ
 սակայն «թաղուն դիտաւորութեան մը» որ
 եւ իցէ կէտի մասին. եւ չեմ յուսար թէ
 «ճարագոյն յանդիմութեան» հետք մը ցու-
 ցաղբած լինիմ տողերուս մէջ:

1. Թէ Մեղրոնեան արբահայր. 1750
 Ապրիլ 6—1772 Մայիս 25, «այդ առեղ-
 ծուածային շրջանին մէջ» իրօք ընտրուած
 էր Միարանական ժողովէն եւ հաստա-
 տէր Միարանական ժողովէն, պաշտօնապէս եւ կամ
 լուրեան կամ ժամանակաւորապէս եւ կամ
 պայմանաւորութեամբ, իբրեւ ընդհանրա-
 կան արբահայր Հայ Միանձանց Ս. Ղազա-
 րու (ինչպէս կը մերժէ զայս մեր աւան-
 դութիւնը), դժբախտաբար Հ. Տայեանի յա-
 ղալ բերած 1—8 ապացոյցները յոյժ տկար
 կը թուին առ այս: Բայց հզօր ապացոյց
 կ'երեւայ թ. 9, ուր կ'ըսուի թէ 1750 փետր.
 18ին Հոռոմ կը թոյլատրէ ընտրութեան ժո-
 դով. եւ «Ս. Ժողովը 1750 Ապրիլ 25 թուա-
 դով կիր պաշտօնական թղթով կը վաւերացնէ
 Մեղրոնեանի արբայութիւնը»: Եթէ այս
 հաստատագրին բնագիրը հանդերձ հայերէն
 թարգմանութեամբ պահուած է Ս. Ղազա-
 րու Դիւանին մէջ, ի՞նչ պէտք կար 1—8 ան-
 բոյ Դիւանին մէջ, որ օր. Աստեմանիի
 գօր ապացոյցներու եւ այլն: Հանդիցը
 նամակի տիպոգրագրին եւ այլն: Հանդիցը
 կարճագոյնս լուծուած պիտի լինէր, եթէ
 պատմական հաստատագրիս պատճենը եւ
 անոր վերաբերեալ ժողովոյն գործերը հրա-
 տարակուէին Դիւանական թղթերու շարքին
 մէջ: Քանի վաւերագիրները չեն խօսիր,
 չեմ ուզեր «բժամին եւ անհիմն յայտարա-
 րութիւնս» ի մասին ընտրութեան Մեղրո-
 նեան Արբահօր յետս կոչել, որովհետեւ մեր
 նեան Արբահօր յետս կոչել, որովհետեւ մեր